ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Business

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РА

# ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

# «ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՈՉ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԵՐՓՈՔՐ, ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ»

ԵՐԵՎԱՆ, 2020 թ.

## 29/07/20

**I wonder if our business is eligible to apply for EU4Business "Innovative Tourism and Technology Development for Armenia":
http://www.sirune.am is an online platform for beauty salons and barbershops that offers online booking of beauty visits for beauty salon clients and salon management online tools for beauty salons.**

Thank you for the letter. The grant program is open to all Micro, Small or Medium Size non-technological Company in the fields of production and services **(tourism, technology, agriculture and trade sectors are excluded).**

If the online platform is registered as a legal entity in Republic of Armenia, then you are eligible to apply.

Full information you can find here:
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ENG_Applicants-manual_RGB.pdf-d9c6d.pdf

**Եթե ձեռնարկատիրությունն իրականացվում է անմիջապես հասարակական կազմակերպության կողմից որպես սոցիալական ձեռնարկատիրութուն և գրանցված չէ առանձին որպես առևտրային կազմակերպութուն կարող է մասնացել ծրագրին: Այսինքն դիմող իրավաբանական անձը ոչ թե առևտրայինն է այլ հասարակական կազմակերպութունը իր ձեռնարակատիրական բաղադիրով:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների): Հասարակական կազմակերպությունները ներառված չեն:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Հայտարարության կանոններում նշված է որ պետք է ներբեռնենք ծրագրի նկարաագչության ներկայացման ձևը, և բյքւջրի ներկայանման ձևը, բայց հայտարարությանը կից ոչինչ չկա ներբեռնելու**

Մրցույթի հայտարարությունը և դիմելու ամբողջական փաթեթը (ծրագրի նկարագրության ներկայացման ձև, բյուջեի ներկայացման ձևը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն) կարելի գտնել հետևյալ հղումով՝ **Մրցույթի հայտարարություն**
https://armacad.info/2020-07-24--call-for-papers-nnovation-for-economic-recovery-for-micro-small-and-medium-size-non-tech-companies-grants-programme?fbclid=IwAR1-PuHH-S5q1Q2I5EfVU1X-P0PUwodkeKbkU2Gj4GYiD-5jNNFPEgI5ZvM

**Արդյոք գործող հյուրատունը կարող է մասնակցել այս դրամաշնորհային ծրագրին**

Գրանտային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (**բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների**):

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf ,

որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Համապատասխանության պահանջներում նշված է, որ  Ընկերությունը պետք է գրանցված լինի որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում, ինձ հետաքրքիր է արդյո՞ք ԱՁ համարվում է իրավաբանական անձ և եթե ոչ, արդյոք նորաբաց ՍՊԸ-ն մրցունակ է այս պարագայում, թե հարկավոր է , որպեսզի ընկերությունը տևական ժամանակ գործունեություն ծավալելուց լինի:**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5): Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ Ընկերության գործունեության ժամկետը որոշիչ չէ, իսկ մրցունակությունը կախված է լինելու ներկայացվող նորարարական առաջարկից:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Ընկերությունն ունի հետաքրքիր գաղափար լոգիստիկ լուծումների և արտահանման հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ: Հետաքրքիր է,  արդյո՞ք ընկերությունը կարող է օգտվել "Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար" ծրագրից: Խնդրում եմ պատասխանել հնարավորինս սեղմ ժամկետում, որպեսզի դրական պատասխանի դեպքում կարողանանք մասնակցել նշված ծրագրին:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների):

Առաջարկում ենք մանրամասնորեն ուսումնասիրել  **Դիմորդների ձեռնարկը՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , մասնավորապես էջ 4 և էջ 5-ը, որտեղ նկարագրված են, թե որ կազմակերպություններն են իրավասու և ինչպիսի գաղափարներն են ընդունելի  այս ծրագրին դիմելու համար: Եթե Ձեր ընկերությունը համապատասխանում է ձեռնարկում նշված անհրաժեշտ պայմաններին, ապա, իհարկե կարող եք դիմել:

**Կցանկանայի իմանալ, եթե մենք ներկայացնում ենք կահույքի արտադրություն և ունենք նորարարական պրոդուկտներ և ծրագրեր կահույքի շուկայում, արդյո՞ք կարող ենք դիմել ՝ ԵՄ-Ն ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ «ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ-ին:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին

ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների): Կաhուլքի արտադրությունը ներառված է ծրագրում:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել Դիմորդների ձեռնարկում՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**1- Եթե մինչ COVID19- ը աշխատել ենք տուրիզմի բնագավառում,այժմ փոխել ենք գործունեության ուղղությունը, և գործի սկիզբը դրված է, կարող են դիմել ձեր ծրագրին?**
**2- Ծրագրի առաջարկը ներբեռնելուց հավանաբար խառնվում են ֆոնտերը և տեքստը չի կարդացվում: Կարելի է արդյոք փոխել այն? և ինչ տեսքով Ձեզ ուղարկենք, միգուցե PDF -ի տեսքով?**
**3- Նմանատիպ պրոբլեմ էլ Բյուջեի ներայացման փաստաթղտում է խախտված եքզելի դաշտերը, կարելի է կարդացվող տեսքի բերել մինչ լրացնելը:**
**4- Բյուջեի ներկայացման ձևի մեջ, ընդամենը 3 բաժին է ներառված: Սա նույնպես ներբռման պրոբլեմ է?**

Դրամաշնորային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների): Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝** https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

Փորձեք կրկին ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը հետևյալ հղումով՝ **Մրցույթի հայտարարություն** https://armacad.info/2020-07-24–call-for-papers-nnovation-for-economic-recovery-for-micro-small-and-medium-size-non-tech-companies-grants-programme?fbclid=IwAR1-PuHH-S5q1Q2I5EfVU1X-P0PUwodkeKbkU2Gj4GYiD-5jNNFPEgI5ZvM

## 30/07/20

**Մենք ընտանեկան ձեռնարկություն ենք Ա/ձ կարգավիճակով. և արդեն ներկայացրել ենք հայտ այլ ԵՄ ծրագրերի մրցույթին մասնակցելու համար այլ գաղափարով, բայց դեռևս պատասխան չենք ստացել, կարելի մասնակցել նաև այս ծրագրի մրցույթին.**

Ինչպես նշված է Դրամաշնորհային ծրագրի հայտարարության մեջ՝ դիմորդները կարող են ներկայացնել առաջարկություն, որը քննարկվում է նաև այլ կազմակերպությունների կողմից: Եթե ձեր առաջարկն ընտրվել է ինչպես ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախաձեռնության, այնպես էլ ֆինանսավորող այլ կազմակերպությունների կողմից, ձեզանից կպահանջվի զեկուցել այդ մասին ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախաձեռնությանը և համապատասխանեցնել կամ ընդլայնել գործողություններն ու բյուջեն ըստ անհրաժեշտության, այնպես որ բյուջեի կրկնօրինակման հնարավորություն չլինի: Կարող եք ընդլայնել ձեր ծրագրի աշխատանքային շրջանակը այլ աղբյուրներից ստացված ֆինանսավորմամբ, եթե ավարտեք այն ծրագիրը, որի համար ֆինանսավորում եք ստացել ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախաձեռնության կողմից:

**Մեր գաղափարը օրգանական հյուրերի և գինու արտադրությունն և էկոտուրիզմի զարգացումն է, այդ հենքի վրա տուրիզմի ստեղծումն ու առաջխաղացումը, այսինքն տուրիստական հյուրասրահի և գիշերատան կառուցում: Կարելի է արդյոք այս գաղափարով մասնակցել մրցույթին?.**

Ինչպես նշված է հայտարարության մեջ Տուրիզմի ոլորտը այս Դրամաշնորհային ծրագրի մեջ չի ներառված: Եթե Ձեր առաջարկը ուղղված է էկոտուրիզմի զարգացմանը, ապա ոչ, գաղախարը ընդունելի չէ:

**Եթե չի կարելի մասնակցել որպես Ա/Ձ, հնարավոր է արդյոք մասնակցել որպես թիմ և պարտավորվելով , որ ծրագրի հաղթելու դեպքում կստեղծվի ՍՊԸ.**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5): Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ: Թիմը նույնպես իրավաբանական անձ չէ:

**Կամ եթե չի կարելի ոչ մի ձևի մեջ մասնակցել, կարելի է արդյոք հիմա մեր նոր գրանցված ՍՊԸ -ով, որ դեռևս ոչ մի ցուցանիշ չունի և մասնակցել թիվ 2 կետի նշված գաղափարով;**

Ինչպես նշված է հայտարարության մեջ Տուրիզմի ոլորտը այս Դրամաշնորհային ծրագրի մեջ չի ներառված: Եթե Ձեր առաջարկը ուղղված է էկոտուրիզմի զարգացմանը, ապա ոչ, գաղախարը ընդունելի չէ:

**Կարող եմ որպես ԱՁ հանդես գալ և մինչև երբ պիտի կազմ-ը գրանցված լինի:**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):
Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

**Արդյոոք ծրագրի շահառու կարող է լինել ճամբարակում գործող**

**Կաթի վերամշակման արտադրամա՞սը, որը արտադրում է պանիրների տեսականի, կարագ, կաթնաշոռ և այլն:**

Գրանտային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների բոլոր գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների): Վերամշակող արդյունաբերության ոլորտը ներառված է ծրագրի մեջ:

**18-րդ դարի ոճային դարբնոցը, որտեղ բացի ընթացիք պատվերներից, իրականացվում են վարպետաց դասընթացներ ավագ դասարանցիների համար:**

Մանրամասն ուսումնասիրելով Դիմորդների ձեռնարկը՝
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf,
դուք կարող եք պարզել, թե որ ձեռնարկություններն են իրավասու (էջ 4) և որ գաղափարներն են ընդունելի (էջ 5) այս ծրագրին մասնակցելու համար:

**Ծրագրից կարելի է օգտվել նոր գրանցված ՍՊԸ-ի, կամ ԱՁ-ի միջոցով**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի՝ անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ: ՍՊԸ-ն համարվում է իրավաբանական անձ:

**Բարև ձեզ ,ես ձեր հայտարարած մրցույթի մասով ,հայտը լրացրել ուղարկել եմ սակայն փոքր ինչ դժվարանում եմ բյուջեի աղուսյակի լրացման համար,ինչպես կարող եք օգնել կամ ուղղորդել շնորհակալություն**

Ցավոք մենք նման աջակցություն չենք տրամադրում: Խորհուրդ ենք տալիս դիմել բիզնես խորհրդատուներին:

## 31/07/20

**I have a retail shop along with e-commerce business selling imported products (non-food), so am I included in the target group, and am I eligible for the grant program? My goal is to implement a CRM system to optimize business management and access new markets and networks.**

The grant programme is open to all Micro, Small or Medium Size non-technological Companies in the fields of production and services (tourism, technology, agriculture and trade sectors are excluded).

Full information you can find here:
https://armacad.info/2020-07-24--call-for-papers-nnova-tion-for-economic-recovery-for-micro-small-and-medium-size-non-tech-companies-grants-programme?fbclid=IwAR1-PuHH-S5q1Q2I5EfVU1X-P0PUwodkeKbkU2Gj4GYiD-5jNNFPEgI5ZvM

**Արդյոք կարող ենք դիմել մինչև օգոստոսի 12 -ը վերջնաժամկետով դրամաշնորհային ծրագրին՝ հյուրատան տարածքում որպես նորարարական ծառայություն ապիտնակների ձեռք բերման և որպես այլընտրանքային էներգիայի ստացման աղբյուր՝ արևային էլ. կայանի ձեռք բերման համար:**

Ինչպես նշված է դիմորդների ձեռնարկում՝
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf,
Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ- տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների), որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ

**«ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության «Նորարարական տուրիզմ և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի հայտարարության մեջ նշվում է, որ կարող են դիմել արտադրության կամ ծառայությունների մատուցման ընկերություններ՝ բացառությամբ զբոսաշրջության, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների: Նման պայմանի դեպքում արդյո՞ք կարող ենք դիմել գյուղմթերքի՝ նորարարական օնլայն խանութի վաճառքի ծրագրով, և արդյո՞ք հնարավոր է հայտ ներկայացնել բարեգործական հիմնադրամի անունից:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին

ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների):

Դրամաշնորհային ծրագրին իրավասու են դիմել ՀՀ գրանցված այն ընկերությունները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Հասարակական կազմակերպությունները ներառված չեն:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել Դիմորդների ձեռնարկում՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf, որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Մեղրի քաղաքում 2019 թ-ից գործում է Smartkids մանկական զարգացման կենտրոն՝ 3-6 տարեկան երեխաների համար, կից գործում է նկարչության խմբակ՝ 6-17 տարեկանների համար, բիզնեսի ընդլայնման համար ցանկանում եմ ստղծել Smart creative studio ուսումնական կենտրոն, որտեղ 6-17 տարեկան երեխաները և պատանիները կսովորեն՝ ռոբոտաշինություն, գրաֆիկական դիզայն, կայքերի մշակում, լուսանկարչություն, ֆիլմերի ստեղծում, լրագրություն և այլն: Ուզում եմ նշել, որ տարածաշրջանում չկան նմանատիպ կենտրոններ, սա նաև նոր հնարավորություն է աշխատատեղեր ստեղծելու: Արդյո՞ք իմ այս գաղափարը կարող եմ ներկայացնել՝ Նորարարական գաղափարներ/բիզնես մոդելներ անվանակարգում:**

Առաջարկում ենք մինչև դիմելը մանրամասնորեն ուսումնասիրել Դիմորդների ձեռնարկը՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf, ճշտելու համար, թե ինչպիսի՞ նախագծեր են (էջ 4) և որ՞ կազմակերպություններն են (էջ 5) իրավասու այս դրամաշնորհային ծրագրին մասնակցել:

## 02/08/20

**Արդյոք նոր բացված ԱՁ կազմակերպություններ կարող են դիմել դրամաշնորհին?**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

**Դրամաշնորհին դիմելու համար պետք է՞ անպայման ԱՁ ունենալ, կարող եմ դիմել մի ծրագրի համար որը լինելու է սկսնակ, սկսնակ ասելով ի նկատի ունեմ դիզայներական բիզնես սկելու համար դիմեմ դրամաշնորհին, ծննդյան, հարսանեկան, նշանադրության ձևավորման պարագաներ գնելու համար: Իմ բիզնես գաղափարը համապատասխանում է ձեր դրամաշնորհին կարող եմ դիմել՞:**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի՝ անհատ

ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

Մանրամասն տեղեկություններ, թե ինչպիսի նորարարական գաղափարներն են համապատասխանում դրամաշնորհի պահանջներին կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf, որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**“Դրամաշնորհ ստացողները իրավունք չունեն ստացված միջոցները կամ դրա մի մասը փոխանցել այլ կողմերի” /մեջբերում տեքստից/: Արդյո՞ք սա նշանակում է, որ եթե օրինակ կազմակերպությունն ուզում է ունենալ նոր սերնդի կայքէջ, որ հնարավորություն կընձեռնի նոր որակի և ծավալի ծառայություններ մատուցել և չունի համապատասխան մասնագետ(ներ) այն իրականացնելու (վեբ ծրագրավորող, դիզայներ և այլն), ապա չի կարող պատվիրել այն մեկ այլ կազմակերպության: “Դիմորդների և ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախաձեռնության միջև առաջարկներն ու նամակագրությունները պետք է լինեն հայերեն և/կամ անգլերեն լեզուներով:” Արդյո՞ք սա նշանակում է, որ եթե առաջարկն ուղարկվում է հայերեն, ապա պետք է լինի նաև անգլերեն տարբերակը, կամ պետք է միայն անգլերեն դիմել:**

1. Դիմորդների ձեռնարկի (https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf)  7-րդ էջում նշված  “Դրամաշնորհ ստացողները իրավունք չունեն ստացված միջոցները կամ դրա մի մասը փոխանցել այլ կողմերի” պահանջը պետք է մեկնաբանել հետևյալ կերպ՝ դրամաշնորհ ստացած ընկերությունը իրավասու չէ այդ գումարը տրամադրել երրորդ կողմին որպես փոխառություն կամ դրամաշնորհ: Դրամաշնորհը պետք է օգտագործվի միայն առաջարկված նորարարությունը իրականացնելու նպատակով (օրինակ ապրանքների կամ ծառայությունների գնում):

2. Դրամաշնորհի փաթեթ-առաջարկը կարող եք ներկայացնել կամ հայերեն կամ անգլերեն: Թարգմանության կարիք չկա:

**Արդյո՞ք տուրիզմի ոլորտի ներկայացուցիչները կարող են դիմել թե ոչ:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի,  գյուղատնտեսության և առևտրի ոլորտների):

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝**
https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Գործունեության նույն հասցեով գրանցված են 2 ԱՁ, որոնց գործունեությունը նույն ոլորտում չէ, կարո՞ղ են դիմել տարբեր ծրագրերով:**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում՝ այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝** https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Նոր ստեղծված ընկերությունը ցանկություն ունի աճեցնելու և պահածոյացնելու կախասունկ: Խնդրում ենք պարզաբանել ընկերությունը կարող է դիմել «Նորարական դրամաշնորհ՝ ուղղված ոչ տեխնոլոգիական ԳՓՄՁ տնտեսական վերականգնման ծրագրին:**

Ինչպես նշված է հայտարարության մեջ՝ գրանտային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների **գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար** (բացառությամբ տուրիզմի, **գյուղատնտեսության** և առևտրի ոլորտների):

Հարցից կարելի է ենթադրել որ մեկ ամբողջական առաջարկի մեջ կա երկու գործունեության ոլորտ՝ **գյուղատնտեսություն** (կախասունկի աճեցում) և **վերամշակող արդյունաբերություն** (կախասունկի պահածոյացում): Եթե անգամ վերամշակող արդյունաբերությունը ծրագրում ընդգրկված է, ապա գյուղատնտեսությունը բացառություն է հանդիսանում: Հետևաբար որպես մեկ ամբողջական առաջարկ այն ընդունելի չէ:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում՝** https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

## 04/08/20

**Մենք նախատեսում ենք դրամաշնորհով ավելացնել մեր թվային ներկայությունը և գումարը նպատակ ունենք ծախսելու SS լուծումների վրա: Այդ նպատակով նախատեսում ենք այն պատվիրել SS ընկերությանը: Մինչդեռ Ձեր պարզաբանումներով գրված է, որ դրամաշնորհի գումարը չպետք է փոխանցվի երրորդ անձանց: Այդ դեպքում, ինչպես վարվել՞:**
**Այդ ընկերության ներկայացուցիչներին ընդունել աշխատանքի՞, թե աութսորս թույլատրում եք:**

Դիմորդների ձեռնարկի (https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf)
7-րդ էջում նշված է՝ “Դրամաշնորհ ստացողները իրավունք չունեն ստացված միջոցները կամ դրա մի մասը փոխանցել այլ կողմերի” պահանջը պետք է մեկնաբանել հետևյալ կերպ՝ դրամաշնորհ ստացած ընկերությունը իրավասու չէ այդ գումարը տրամադրել երրորդ կողմին որպես փոխառություն կամ դրամաշնորհ: Գումարը պետք է օգտագործվի միայն առաջարկված նորարարությունը իրականացնելու նպատակով (օրինակ ապրանքների կամ ծառայությունների գնում):

**Մրցույթին կարո՞ղ է մասնակցել Անհատ Ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունեցող կազմակերպությունը և կապ ունի՞, թե երբ է այն ստեղծվել:**

Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի՝ անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել Դիմորդների ձեռնարկում՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Զբաղվում ենք Սևանի ափին հանգստի կազմակերպմամբ..Հնարավոր է օգտվել դրամաշնորհից, լճի վրա պլասմասե լողացող սրճարան գտնելու համար?**

Ինչպես նշված է հայտարարության մեջ՝ ինչպես Տուրիզմի այնպես էլ Առևտրի ոլորտները ներառված չեն այս Դրամաշնորհային ծրագրում:

**Սկսում ենք օրգանիկ և բացարձակ մաքուր սննդամթերքի առցանց առևտուրը: Հնարավոր է դրամաշնորհ ստանալ «Ամազոն» և այլ միջազգային առևտրային ցանցերում «ոսկե» կամ նմանատիպ հաշիվ գրանցելու համար?**

Մանրամասները կարող եք կարդալ Դիմորդների ձեռնարկում՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf:

## 05/06/07 – 08.20

**Դիմորդների ձեռնարկում նշված է որ թիրախային խմբեր են բոլոր ԳՓՄՁ-ները ոչ տեխնիկական ոլորտներից (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների); Ճիշտ եմ հասկանում, որ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտները ՉԵՆ համարվում թիրախ խումբ և չեն կարող դիմել, թե՞ հակառակը:**

Այո, տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտները չեն ընդգրկված այս դրամաշնորհային ծրագրում:

**Հավելված 1-ի I-ի 3-րդ կետում նշված կազմակերպության տեսակը, թե՞ ինչով է զբաղվում կազմակերպությունը, օժանդակ նյութերը ֆայլով կցենք՞, ինչպես նաև թիմի անդամների ինքնակենսագրականները առանձին ֆայլով ուղարկենք՞ էլ. փոստին:**

Թիմի անդամների կենսագրությունները որպես առանձին փաթեթ պետք է ներառվի առաջարկի մեջ: Իսկ Հավելված 1-ի բոլոր հարցերը պետք է լրացվեն փաստաթղթում տրամադրված համապատասխան դաշտերում:

**Հավելված 1-ի II-րդ կետով Ծրագրի առաջարկում պետքե նշենք թե՞ ինչ ենք ուզում ձեռք բերել տվյալ առաջարկով և որքան՞, թե՞...**

Հավելված 1-ի II-րդ կետում պետք է նկարագրեք այն նորարական գաղափարը, ինչը ուզում եք իրականացնել ու բացատրեք թե ինչով է այն յուրահատուկ:

**11-րդ կետում գաղափարի իրականացման փուլերը վեց ամսվա ընթացքում նկատի ունենք աջակցությամբ տրամադրվող ամբողջ գումարի չափը բաժանենք 6 ամիսների ու գրեք՞ աղյուսակում, թե՞ առաջին փուլով տրամադրվող 10.000 եվրոն, և նկարագությունը հատվածում ինչ նկատի ունեք՞:**

11-րդ կետում պետք է նկարագրել գաղափարի իրականացման փուլերը վեց ամսվա ընթացքում այլ ոչ թե ծախսերը:

**11-րդ կետում գաղափարի իրականացման փուլերը վեց ամսվա ընթացքում նկատի ունենք աջակցությամբ տրամադրվող ամբողջ գումարի չափը բաժանենք 6 ամիսների ու գրեք՞ աղյուսակում, թե՞ առաջին փուլով տրամադրվող 10.000 եվրոն, և նկարագությունը հատվածում ինչ նկատի ունեք՞:**

11-րդ կետում պետք է նկարագրել գաղափարի իրականացման փուլերը վեց ամսվա ընթացքում այլ ոչ թե ծախսերը:

**Բյուջեի ներկայացման ձևի մեջ պետքե՞ լրացնենք միայն ներկա պահին կատարվող բոլոր ծախսերը, թե՞ այն ծախսերն էլ, որոնք նախատեսում ենք Դրամաշնորհային ծրագրով ձեռք բերելիս:**

Բյուջեի ներկայացման ձևի մեջ պետք է ներառվեն այն ծախսերը, որոնք իրականացվելու են այս դրամաշնորհով:

**Ակնկալվող օգուտներ բաժնում ի նկատի ունեք՞ տրամադրված աջակցությունից հետո ակնկալվող եկամուտները նշենք՞**

Այո:

**Դրամաշնորհը տրամադրվում է միայն նորարարական սարքեր ձեռք բերելու համար, թե՞ դրա հետ մեկտեղ կարող ենք դրամաշնորհ ստանալ նաև օֆիսի համար ավելի մեծ տարածք ձեռք բերելու նպատակով, նոր աշխատողներ ներգրավելու նպատակով աշխատավարձի տրամադրման համար:**
**Չունեք՞ լրացված օրինակելի ձև ուղարկեք մեզ:**

Դրամաշնորհը տրամադրվում է նորարարական ԳԱՂԱՓԱՐԸ իրականացնելու նպատակով: Եվ այդ գաղափարից է կախված անհրաժեշտ ծախսերի շրջանակը:

**Արդյոք կարող է «Նորարարական դրամաշնորհներ՝ ուղղված ոչ տեխնոլոգիական գերփոքր, փոքր եվ միջին ձեռնարկությունների տնտեսական վերականգնմանը» հյուրանոցը դրամաշնորհային մրցույթին հայտ ներկայացվել իր՝ հյուրատան/հյուրանոցի կառավարման/ամրագրման համակարգը թվային եղականակով օպտիմալացնելու համար:**

Դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների): Հյուրատունը (հյուրանոցը) իր գործունեությունը տուրիզմի բնագավառում է, իսկ այդ բնագավառը ընդգրկված չէ այս ծրագրում:

**Ձեր կողմից ներկայացված փաստաթղթի Մրցույթի նպատակը բաժնի, երկրորդ տողում՝ փակագծերում գրված է բացառությամբ զբոսաշրջության .... այլ:**

**Հարցն այդ բացառության մասին է: Խնդրում եմ պարզաբանել, արդյոք կարող է մարզում գործող փոքր հյուրանոցը դիմել/մասնակցել այս մրցույթին: Շնորհակալ կլինեմ հստակ պատասխանի համար, առանց հղումների:**

Ոչ չի կարող:

**Բիզնեսի կառավարման օպտիմալացում և լոգիստիկ, հիգիենային առնչվող նորարարական մոտեցումներ: Այս թեմաների հետ կապված, խնդրում եմ ասեք ,մենք կարող ենք սարքավորումներ ձեռք բերել, արտադրության կարողությունները մեծացնելու համար , թե միայն խորհրդատվություն, ուսումնասիրություն, աուդիտ կարող ենք կազմակերպել:**

Դրամաշնորհը պետք է օգտագործվի միայն առաջարկված նորարարությունը իրականացնելու նպատակով (օրինակ ապրանքների կամ ծառայությունների գնում): Կա միայն հետևյալ սահմանափակումը՝ դրամաշնորհ ստացած ընկերությունը իրավասու չէ այդ գումարը տրամադրել երրորդ կողմին որպես փոխառություն կամ դրամաշնորհ:

**Կազմակերպությունը (իրավաբանական անձը),որի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է կարող է մասնակցել հայտարարված դրամաշնորհային մրցույթին՞**

Այո, եթե նորարարական առաջարկը հնարավորություն կընձեռի ոչ միայն վերսկսել կազմակերպության գործունեություն այլև ապահովել զարգացման նոր փուլ:

**Ծրագրին կարո՞ղ ենք դիմել, եթե աշխատում ենք որպես Անհատ Ձեռնարկատեր:**

. Ինչպես նշված է Դիմորդների ձեռնարկում այս դրամաշնորհին կարող են դիմել այն ընկերությունները որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում ( էջ՝ 5):

Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում**՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Եվ եթե ծրագրին մասնակցելու համար գրանցենք բոլորովին նոր ՍՊԸ, դա ինչ-որ կերպ կազդի ծրագրի մասնակիցների ընտրության գործընթացի վրա:**

Ընկերության գործունեության ժամկետը որոշիչ չէ, իսկ մրցունակությունը կախված պետք է լինի ներկայացվող նորարարական առաջարկից:

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել Դիմորդների ձեռնարկում՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf, որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

**Ես մասնագիտությամբ օպերոտոր եմ և ընկերներով նպատակ ունենք ստեղծել մի հարթակ, որը քաղաքական նորություններից բացի կզբաղվի գյուղատնտեսական, բիզնես, կրթական, մշակութային նորություններով, կնկարահանվեն կարճ ինֆորմացիոն հոլովակներ տարբեր միջազգային ծրագրերի մասին, որոնք նպաստում են ՀՀ-ի զարգացմանը: Արդյոք ունեք նման ծրագիր, որին կկարողանանք դիմել և աջակցություն ստանալ:**

Ներկայումս հայտարարված դրամաշնորհային ծրագիրը բաց է բոլոր ոչ տեխնոլոգիական ոլորտների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար (բացառությամբ տուրիզմի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների):

Մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել **Դիմորդների ձեռնարկում**՝ https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf , որը մանրամասնորեն նկարագրում է դիմելու համար ամբողջ գործողությունների շղթան և հերթականությունը:

Հետագա հնարավորությունների մասին ծանոթանալու համար հետևեք մեր տեղեկատվական հարթակներին:

**ՀԿ-ով կարելի է դիմել:**

Դրամաշնորհային ծրագրին իրավասու են դիմել ՀՀ գրանցված այն ընկերությունները որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Հասարակական կազմակերպությունները ներառված չեն:

**Կարո՞ղ է կազմակերպությունը վեբ ծրագիր պատվիրել ծրագրավորման ընկերությունից, այլ ոչ թե իր աշխատողների միջոցով ստեղծել, և ինչ է անհրաժեշտ դրա համար: Կարո՞ղ է կազմակերպությունը որոշակի ծառայություններ ստանալ այլ ընկերությունից, այլ ոչ թե իր աշխատողների միջոցով անել դա, և ինչ է անհրաժեշտ դրա համար:**

Այո կարող է: Դիմորդների ձեռնարկի (https://armacad.info/images/2015/02/GIZ%20Armenia/2020/July/Innovation%20for%20Economic%20Recovery/ARM_Applicants-manual_RGB.pdf-c2939.pdf) 7-րդ էջում նշված է "Դրամաշնորհ ստացողները իրավունք չունեն ստացված միջոցները կամ դրա մի մասը փոխանցել այլ կողմերի" պահանջը պետք է մեկնաբանել հետևյալ կերպ՝ դրամաշնորհ ստացած ընկերությունը իրավասու չէ այդ գումարը տրամադրել երրորդ կողմին որպես փոխառություն կամ դրամաշնորհ: Գումարը պետք է օգտագործվի միայն առաջարկված նորարարությունը իրականացնելու նպատակով (օրինակ ապրանքների կամ ծառայությունների գնում):

**Անհրաժեշտ պաշարների ձեռքբերման համար պարտադի՞ր է արդյոք նախապես գնային հարցում նվազագույնը 3 ընկերությանը, թե ոչ:**

Դրամաշնորհի պայմանագրին կից շահառուին կտրամադրվեն ապրանքների և ծառայությունների գնման անհրաժեշտ կանոնները

**Կարո՞ղ է արդյոք ծրագիր շահող ընկերությունը ծրագրի իրականացման ընթացքում փոխել աշխատակցին կամ մասնակցին համարժեք որակավորմամբ մյուսով:**

Համարժեք որակավորումը ապահովվելու դեպքում նման փոփոխություն հնարավոր է:

**Դուք մի քանի տեղ նշում եք**
**«Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի հոդված 26.2-ի և Հոդված 50-ի անհատ ձեռնարկատերը (ԱՁ)-ն չի համարվում իրավաբանական անձ:»**

**Այդ հոդվածներում չկա ձևակերպում (ԱՁ-ն չի համարվում իրավաբանական անձ): Նշված է, որ կարող է գրանցված լինել, կամ ոչ գրանցված գործունեություն ծավալել: Իմ ԱՁ-ն գրանված է, ունի և գրանցման համար և Հարկային նույնականացման համար: Երկու տարուց ավել բոլոր բնագավառներում գործել է որպես իրավաբանական անձ, վարկավորում էլ եմ ունեցել որպես իրավաբանական անձ, ՀԴՄ սարքն էլ եմ ձեռք բերել որպես իրավաբանական անձ:**
**Շատ կխնդրեի ավելի կոնկրետ այդ հարցին պատասխանեիք:**

Թեև որպես ԱՁ դուք ունեք ՀՎՀՀ և կարող եք իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, սակայն սա Ձեզ իրավաբանակն անձի կարգավիճակ չի տալիս քանի որ պատասխանատվությունների շրջանակի համար գործում են օրենքով սահմանված հետևյալ տարբերությունները՝

ԱՁ- Անհատ Ձեռնարկատիրոջ Մասին օրենք
**Հոդված 9.** Անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատվությունը
Անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:

Իրավաբանական անձ – (Քաղ. Օրենսգիրք)
**Հոդված 60.** Իրավաբանական անձի պատասխանատվությունը
1. Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

**Կազմակերպությունը վերամշակում է ռեհան և մասուր որոնցից էլ պատրաստում ենք օշարակ: Խնդրում եմ ասել արդյոք կարող եմ դիմել դրամաշնորհային ծրագրին:**

Այո, քանի որ վերամշակման արդյունաբերությունը որպես ոլորտ ընդգրկված է դրամաշնորհային ծրագրում:

**Ծրագրի բյուջեում կարող ենք ընդգրկել.**
**հումք՝ ասենք կարի արտադրության դեպքում կտոր, եթե այո, ապա կա՞ որևէ տոկոսային հարաբերություն, թե որքան պետք է կազմի  նյութերի /հումքի գումարը, ողջ բյուջեի համեմատությամբ: Եվ եթե կան տրանսպորտային ծախսեր՝ բենզինի գնման ձևով ու եթե այո, ապա կա՞ որևէ սահմանափակում:**

Գումարը պետք է օգտագործվի միայն առաջարկված նորարարությունը իրականացնելու նպատակով (օրինակ ապրանքների կամ ծառայությունների գնում): Որևէ տոկոսային սահմանափակումներ չկան, բոլոր ծախսերը պետք է լինեն պատճառաբանված անհրաժեշտ ներկայացված նորարարական առաջարկի իրականացման գործընթացում: Դրամաշնորհի պայմանագրին կից շահառուին կտրամադրվեն ապրանքների և ծառայությունների գնման անհրաժեշտ կանոնները: